բեալն Դ եկեղեցի էր և ազգին Ֆռանկաց ևս է. Բենետիքտոս եկեղեցի մի Ֆռանկաց մնաց, բայց ամենայն գիրք և սպասք նորին թալանեցան և (պոբոպ) որ յաւուր Զչի (6 Ապրէլ) երեկոյէ մինչ ի Շաբաթի երեկոյի, յորում աւուր է լեալ Ապրիլի՝ տօն Աւետեաց Կուսին Աստուածածնի։ Զաղէտ սոցին ոչ կարեմ պատմել, զի ոչ ևս տեսաք որ կայաք յԷտրէնէ և լուաք անդ, որ ի 10-րդ աւուրս ի դուրս կացաք և ի լրմանն եկաք ի քաղաքս մեր և տեսաք բնաջինջ եղեալ զքաղաքն Ղալաթայ և զեկեղեցիքն ամրաշէն և արքայական, մեծածախս և կամարաւոր, վայելուչս զարմանալի տեսողաց։ Իսկ և դեռ ևս այժմ կան հերարձակ և ծոցաբաց և զոսկէնկարեալ պատկերսն, որ լացուցանէ զդիտողս խիղճ հայեացք նոցունց։ Այս լինէր վասն մեղաց մերոց, զոր գրեցաք համառօտ։

Կիրակի Նոր որ յԱպրիլ ԻԹ. ոմն մանուկ տիօք և երիտասարդ հասակաւ ի Հայոց զարմէ ըստ սովորութեան իւրում մտանէ առ սիրառն, և յորժամ իմացեալ զգալուստ առն նորա՝ ելեալ ի տանիսն և անկանի ի վայր թէ փախչի, և մեռանէր իսկոյն։ Զայն տեսեալ անցաւորք ճանապարհաց և Տաճիկք, այրն այն էմիր էր և կարդացող՝ ոչ հաւատայր ի տեսս ազգին իւրում թէ՝ Ի տանէն իմ ոչ է այդ։ Եւ ազգայինք և հայր մեռելոյն բերեալ ի տուն, և վարդապետն ոչ հրամայեաց կատարել զկարգ Նորա և կամ թաղել երիցանց։

ԻԶ[1]) Մայիսի Շաբաթի աւուր մերձ յայրեալ տեղիսն ի Ղալաթայ, որ Մէյէթ ղափիսի ասի, այրէր փոքր ինչ շինութիւնն ի տունս և ի տունս աւերաւ և ապա էջ հուրն։

Յետ Ե աւուր լինէր տօն Համբարձման, որ Մայիս ԼԱ և Տաճիկք պայրամ արարին։

1) Իէ.